



Նկ. 3. Նոր Նախիջևանի գերբը

## ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Մ. ԳՈՐԿՈՒ ՆԱՄԱԿԸ ՏԻԳՐԱՆ ՀԱԽՈՒՄՅԱՆԻՆ

Ա. Գ. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Քերթողական արվեստը հին պատմություն ունի, նույնքան հին են այն ուսուցանելու գաղափարները։ Եվ օրինյալ են այն ուսուցիչները, որոնք դարեր ի վեր կատարել են այդ շնորհակալ գործը՝ նկատել տաղանդավոր սկսնակ գրողներին, հովանավորել, ոգևորել, նաև պարզապես սովորեցրել կատարելագործվելու ճանապարհը։ Աշխարհում ոչ մի հանճարեղ գրող կամ արվեստագետ չի հասել իր կատարելությանը առանց համառ ինքնադաստիարակման և ուսուցիչների փորձի՝ ուղղակի, թե անուղղակի առումով։

Տարբեր դարաշրջաններից, տարբեր գրականություններից պահպանվել են հուշեր, նամակներ, տեսական ձեռնարկներ, թե ինչպես պետք է գրել, եւ ինչ պետք է գրել։ Այդ օրինակ գրական հանճարաբանականները կամ երբեմն խոստովանությունները դասեր են՝ ուղղված ժամանակակիցներին եւ ապագային, որոնցով սնվում եւ ձեռնարկվում է նոր գրական սերունդը։ Ահա նմանօրինակ աշագրավ փաստի ենք հանդիպում, երբ թերթում ենք 1928 թվականի «Գրական դիրքերում» ամսագիրը, որի ապրիլյան (N 4) համարում տպագրված է Մաքսիմ Գորկու նամակը՝ ուղղված Տիգրան Հախումյանին։ Ամսագիրը տպագրել է նամակի ռուսերեն բնագրի լուսապատճենը եւ Տիգրան Հախումյանի կատարած հայերեն թարգմանությունը։

Տիգրան Հախումյանը եղել է բանաստեղծ, թատերագետ, գրականագետ, թարգմանիչ, խմբագիր, վաստակաշատ պրոֆեսոր, որը ռուս գրականություն է դասավանդել Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում, Երևանի պետական համալսարանում եւ Վ. Բրյուսովի անվան ռուսաց եւ օտար լեզուների ինստիտուտում։ Նրա գրականագիտական հետաքրքրությունների շրջանը լայն էր՝ ռուս, արեւմտաեվրոպական, հայ գրական մեծեր, այդ թվում՝ Անտոն Չեխով, Ալեքսանդր Գրիբոյեդով, Դերենիկ Դեմիրճյան։ Թարգմանություններ է կատարել Լոպե դե Վեգայից, Ա. Պուշկինից, Մ. Գորկուց, Ի. Էրենբուրգից եւ շատ ու շատ ուրիշներից։ Նա հատկապես խորացել է թատերական գործերի թարգմանության մեջ՝ ռուսերենից հայերենի թարգմանելով իննսուներեղ ռամատիկական ստեղծագործություններ։

Հանրագիտակ այս մտավորականի մտահոգության սահմանները լայնածավալ էին. նա ջանում էր ուրիշներին փոխանցել իր իմացածը, փորձը, հոգատար ձեռով հայ ընթերցողի առաջ թարգմանաբար բացում էր համաշխարհային գրականության կարեւոր էջերը։ Նրա այս մտահոգությունների առիավառյան է նաև Մաքսիմ Գորկու՝ իրեն ուղարկած նամակի տպագրությունը։ Այն ունեցել է հետևյալ նախապատմությունը։ 1916թ. դեռևս երիտասարդ եւ սկսնակ բանաստեղծ Տիգրան Հախումյանը, որը գրում էր ռուսերեն, եւ դեռևս հայերենը իր գրոց լեզուն չէր, բանաստեղծական առաջին լուրջ քայլերն էր անում, որոնք լույս էին տեսնում ռուսական պարբերականներում։

Եվ անսպասելիորեն նա ստանում է մի երկառոյ. «Ուղարկեցեք, խնդրում եմ, ձեր բանաստեղծություններն իմ անունով՝ «Լեւոնակ» ամսագրի հասցեին։ Ա. Պեշկով»։

Ա. Պեշկովը նույն ինքն էր, եւ Մ. Հախումյանը ոգևորված ընտրում է մի 10-12 բանաստեղծություններ եւ ուղարկում Գորկուն։

Ի պատասխան ստացվում է Մ. Գորկու նամակը, որը լավատեսական էր եւ քաջալերիչ։ Նշանավոր գրողը երիտասարդ բանաստեղծի մեջ տեսնում է գրականության իսկական նվիրյալին, որին եւ հղում է իր պատգամները, որոնց հրապարակումը եւ՝ 1928-ին, եւ՝ այսօր ի շահ գրականության է։

1916 թվի հոկտեմբերի 25-ին գրած իր նամակը Մ. Գորկին սկսում է այսպես.-

«Իհարկե, դուք պետք է գրեք շատ, բայց նույնքան անհրաժեշտ է Ձեզ համար առավել մոտ կանգնել կյանքին, անմիջականորեն ոգտվել նրա ներշնչումներից, պատկերներից, զգալ նրա քրթիւրը նրա մարմինն ու արյունը։ Մի՛ կենտրոնացեք Ձեզ վրա, այլ ամբողջ աշխարհը կենտրոնացրե՛ք Ձեր մեջ։ Կյանքի մեջ շատ բույն կա, բայց կա մեղր.- գտե՛ք այդ մեղրը։ Մի՛ եղեք սոսկ քնարերգու, մի՛ փակեք Ձեր հոգին Ձեր խիճ ձեռքով կառուցած վանդակի մեջ,- համարձակություն գտեք լինելու յե՛վ յերգիծաբան, յե՛վ վիպասան, յե՛վ սատիրիկ, յե՛վ պարզապես ուրախ մարդ։ Կյանքից պիտի կարողանալ ամեն բան վերցնել յե՛վ ամեն բան տալ կյանքին, մարդկանց։

Այժմյան բանաստեղծների մեծամասնությունը կարծես թե անմարդաբանական կոզիների վրա ապրելիս լինի,- կյանքից յե՛վ նրա քառսից դուրս։ Այս, իհարկե, ավելի հեշտ է յե՛վ առավել հարմար է, քան թե իրականության քառսի մեջ ապրելը, սակայն՝ այս նշանակում է- ինքն իրեն կողոպտել։ Չպետք է Ռոբինզոն լինել,- չի՛ հարկավոր։ Պետք է ապրել, աղմկել, խնդալ, հայհոյել, սիրել...

Պետք է որոնել այն, ինչ վոր դեռ յե՛վս չէ գտնված,- նոր խոսքը, հանգը, պատկերը։ Բանաստեղծը- աշխարհիս արձագանքն է, յե՛վ վո՛չ միայն իր հոգու դայակը։

Ահա այսպես: Ցանկանում եմ Ձեզ ամենայն բարիք:<sup>1</sup>

Ա. Պեշկո

Մ. Գորկու նամակում առկա է կյանքի կենսահաստատ փիլիսոփայությունը. կյանքից պետք է կարողանալ ամեն բան վերցնել եւ ամեն բան տալ կյանքին, մարդկանց:

Նա խոսում է գրականության բազմաթիվությունից, հոգեկան լայնածավալ տարրերից մասին՝ պետք աղմկել, ապրել, հայհոյել, խնդալ, սիրել, եւ, իհարկե, չի մոռանում եիշեցնել, որ ամեն մի գրող գրականության մեծ երգչախմբում պետք է ունենա իր ձայնը եւ չպետք է մոռանա, որ գրականությունը մարդկային կյանքի արձագանքն է:

Վերադառնալով Մ. Գորկու նամակը՝ ուղղված Տիգրան Հախումյանին, կամենում ենք 70 տարի անց այս հոդվածի բանասիրական ֆակուլտետներում սովորող բոլոր սկսնակ գրողներին, նրանց մատնացույց անելով դեպի մեծ գրականություն տանող ման այս շավիղը, որն անցնելով, համոզված ենք, ավելի հաստատ կբայլեն:

## ДОЛУХАНИЯ АЭЛИТА – ПИСЬМО М. ГОРЬКОГО К ТИГРАНУ АХУМЯНУ.

В 1916 году М. Горький направил письмо к молодому, тогда еще, поэту Тиграну Ахумяну. Это письмо можно было направить вообще всем начинающим писателям, так как в нем есть правдивое описание творческого процесса и намечена важнейшая взаимосвязь жизни и творчества. Письмо Горького в этом аспекте нестареющее и от нее можно многому научиться.

## ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ  
ՏԱՐԱՐԺԵՔ  
ՔԱՆՈՒՆԻ  
ԱՅՏԱՏՐԱԿԱՆ  
ԱՌԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ

## ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ

Հայ բառարանագրությունը հարուստ ժառանգություն է ստեղծել. կազմվել են ամենաբազմազան բառարաններ՝ ներլեզվային եւ միջլեզվային ուղղություններով (բացատրական, բարձրագույնական, արմատական, լեզվաբանական, հոգեբանական, գրականագիտական, դարձվածաբանական, հոմանիշների, համանունների, երաժշտական, ռազմական եւ այլն):

Մակայն բառարանագրական այս նվաճումները գրեթե վերաբերում են ժամանակակից հայերենին՝ նրա արդի բառային կազմին. անտեսվում է գրաբարը:

Եթե նկատի ունենանք, որ գրաբարի բառարանագրական հուշարձանները՝ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» (Խ. Ա. Բ., Վենետիկ, 1836-37) եւ «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1865), լույս են տեսել մեզանից շուրջ մեկ եւ կես դար առաջ, ապա ցավով պետք է ասել, որ գրաբարի բառային կազմի բնության շրջանցումն ստեղծել է մի անջրպետ հայ բառարանագրության ներսում: Այսօր հրապարակի վրա չկան գրաբարի հոմանիշների, հակառակների, համանունների, բառակազմական, կապակցության (բառակապակցական) եւ այլ կարգի բառարաններ: Մանավանդ, առայսօր չունենք գրաբար-աշխարհաբար (արեւելահայերեն) բացատրական բառարան<sup>1</sup>:

Ուրախալի է, որ մեզանում գրաբար-աշխարհաբար բառարանագրական այդ անջրպետը փոքրիշատե կարճելու փորձ է կատարել բանասիրական գիտությունների դոկտոր Լ. Խաչատրյանը: Նա վերջերս լույս ընծայեց «Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարան» աշխատանքը<sup>2</sup>:

Լ. Խաչատրյանը երկու մենագրություն է նվիրել այդ հարցերի լուսարանությանը հայերենի ազատ եւ կայուն կապակցությունների հարթությունների վրա՝ «Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ» (Երևան, 1985) եւ «Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում» (Երևան, 1996):

Լ. Խաչատրյանի ներկա բառարանն ընդգրկում է հին հայերեն մասնագրության մեջ գործածված շուրջ չորս հազար բառ, որոնք բառաբանական իմաստով ու արժեքով երկատված են եւ կազմում են լեզվի ձևաբանորեն տարարժեք բառերի շերտը:

Հայտնի է, որ տարարժեքությունը կարող է արտահայտվել ման միեւնոյն բառույթի շրջանակներում՝ ի հայտ բերելով ներխոսքիմասային ձևաբանական տարարժեքություն: Հեղինակը, սակայն, բառարանում զետեղել է ձևաբանորեն տարարժեք այն բառերը, որոնց երկատված բառաբանական իմաստներն ու արժեքներն ընդգրկվում են տարբեր խոսքի մասերի միջև՝ ի հայտ բերելով միջխոսքիմասային տարարժեքություն:

Այդպիսի բառերը գրաբարում համոզեա են գալիս երկարժեք եւ եռարժեք համատեղումներով:

Գրախոսվող բառարանում ըստ ամենայնի բացատրված են այդ կարգի բառերը:

<sup>1</sup> Պահպանում ենք 1928 թվականին հրապարակված նամակի ուղղագրությունն ու կետադրությունը:

<sup>1</sup> ՆՀԲ-ն գրաբարի բառային կազմը բացատրում է գրաբարով, իսկ ԱԲ-ն՝ արեւմտահայերենով ու բոլորեբերնով:

<sup>2</sup> Լ. Խաչատրյան, Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1998, 160 էջ: